ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2019թ. Թիվ 35-Ն

ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ հոդվածի 18-19- րդ կետերով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8- րդ, 9- րդ, 10- րդ, 11- րդ և 12-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին

որոշում է

Սահմանել 2020 թվականի համար Այգեհովիտ համայնքում տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական՝ (ամառանոցային) տների , ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ,

2) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

Ա. 201- ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 20000 դրամ.

Բ. 501- ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40000 դրամ.

Գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման,

վերականգնման արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակություն՝ 3000 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքական այլ օբյեկտների քանդման թույլտվության տողական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ:

2) ծխախոտի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության տեղական տուրքը ընթացիկ տարվա սահմանվում ՝ 100 000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ,
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ,
3) շահումով խաղեր կազմակերպելու համար՝ 250 000 դրամ,
4) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա յհամար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ.

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 000 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթեր պատճեններ և կրկօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա տեղական տուրքը սահմանել 500 դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:

Տեղական վճարներ

9. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 2500 դրամ:

10. ՏԻՄ- ի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների վճար սահմանել 2000 դրամ:

11. Համայնքի տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

ա/բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 ՀՀ դրամ:

բ/իրավաբանական անձանց համար՝

առևտրի և բնակչության կենցաղային սպասարկման ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ 1քառ. մետրը 35 դրամ, կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային շինությունների մասով՝ 1 քառ. մետրը 3 դրամ,գրասենյակային նշանակության շինությունների մասով 1 քառ.մետրը 6 դրամ:

12. ՏԻՄ-ի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի համար մասնակիցներից վճար՝ 2000 դրամ:

13. Ուժը կորցրած համարել Այգեհովիտ համայնքի ավագանու ,,Այգեհովիտ համայնքում 2019թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին 25.12.2018թ. թիվ 37- Ն որոշումը:

14.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԵՍԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀՈՎԻԿ			
ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ			
ՂՈՒԼԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ			
ՄԱՏԻՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ			
ԱԶԱՏՅԱՆ ԱՐԱ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՐԱՏ			
ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			

Այգեհովիտ համայնքի ղեկավար Լ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2019թ. Թիվ 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերի պահանջներով Այգեհովիտ համայնքի ավագանին

որոշում է

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությաննն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԵՍԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀՈՎԻԿ			
ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ			
ՂՈՒԼԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ			
ՄԱՏԻՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ			
ԱԶԱՏՅԱՆ ԱՐԱ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՐԱՏ			
ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			

Այգեհովիտ համայնքի ղեկավար Լ. Գրիգորյան

Հավելված
Այգեհովիտ համայնքի ավագանու
11.11.2019թ. N 36-Ա որոշման

ՈՒՂԵՐՁ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Մենք՝ ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի ավագանու անդամներս, խիստ կարևորելով ՀՀ-ում տարածքային բարեփոխումների իրականացումը, գտնում ենք, որ ՀՀ սահմանամերձ համայնքների զարգացվածության մակարդակի բարձրացման նոր ռազմավարության արդյունավետության բարձրացման համար նպատակահարմար է ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ, Ազատամուտ, Դիտավան և Վազաշեն համայնքները միավորելով ձևավորել մեկ համայնք Այգեհովիտ համայնքային կենտրոնով: Բազմաթիվ հանրային լսումներ և քննարկումներ են իրականացվել ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ, Ազատամուտ, Դիտավան, Վազաշեն համայնքներում համայնքների միավորման գործընթացի վերաբերյալ, և ամեն անգամ արդյունքում հստակեցվել է, որ բնակիչների բացարձակ մեծամասնությունը կողմ են արտահայտվել վերոհիշյալ չորս համայնքների միավորմանը: Մենք ակնկալում ենք, որ ՀՀ կառավարությունը և Ազգային ժողովը կուսումնասիրեն համայնքների պահանջները և արդյունքում և հաշվի կառնեն համայնքի կարծիքը՝ համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովեն Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքով համայնքի ավագանուն վերապահված լիազորություններով, առաջարկում ենք Այգեհովիտ, Դիտավան, Ազատամուտ և Վազաշեն համայնքները միավորելով ձևավորել մեկ համայնք Այգեհովիտ համայնքային կենտրոնով:

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղարագեդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2019 թ. Թիվ 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38- րդ հոդվածի, 1-ին մասի 1 – ին կետի պահանջներով համայնքի ավագանին

որոշեց

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԵՍԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀՈՎԻԿ			
ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ			
ՂՈՒԼԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ			
ՄԱՏԻՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ			
ԱԶԱՏՅԱՆ ԱՐԱ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՐԱՏ			
ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			

Այգեհովիտ համայնքի ղեկավար Լ. Գրիգորյան

Հավելված
Այգեհովիտ համայնքի ավագանու
2019թ.նոյեմբերի 11 -ի թիվ 37 - Ա
որոշման

ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղական համայնքի 2019թ. Բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտները և ծախսերը

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
1	Գույքահարկ	2713772
2	Հողի հարկ	4376598
3	Տեղական տուրք	30000
4	Դրամաշնորհ	62174300
5	Այլ գույքի վարձակալ. Մուտքեր	450000
6	Հողի վարձակալ. Վարձավճար	195000
7	Տեղական վճարներ	95130
8	Այլ եկամուտ	600000
	Ընդամենը եկամուտներ	*70634800*
	ԾԱԽՍԵՐ	
1	Աշխատավարձ և պարգև	21081936
2	Էներգետիկ ծառայություններ	746798.5
3	Կապի ծառայություն	245386
4	Կոմունալ ծառայություններ	0
5	Ներքին գործուղումներ	189000
6	Ապահովագրական ծախսեր	0
7	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	520000
8	Տեղեկատվական ծառայություններ	32000
9	Աշխատակազմի մասն. զարգ. ծառայություններ	0
10	Մասնագիտական ծառայություններ	0
11	Համակարգչային ծառայություններ	80000
12	Շենքերի և կառ. ընթ. նորոգ. և պահպ.	0
13	Գրասենյակային նյութեր	118880
14	Տրանսպորտային նյութեր	472570
15	Հատուկ նպատակային այլ նյութեր	964510
16	Նվիրատվություն շահույթ չհետ. կազմ.	517500
17	Այլ նպաստներ բյուջեից	5348000
18	Ֆինանսավորում մշակույթի տանը	9379500
19	Ֆինանսավորում մանկապարտեզին	19893000
20	Պարտադիր վճարներ	74600
21	Պահուստային միջոցներից ծախսեր	2540000
22	Վարչական սարքավորումներ	803500
23	Շենք շինությունների կապիտալ վերանորոգում	10001760
24	Հողի իրացումից մուտքեր	-1712693
	Ընդամենը ծախսեր	*71296247.5*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2019թ. Թիվ 38-Ն

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5- րդ կետով՝ համայնքի ավագանին

Որոշում է

1.Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասի 11. 1. 2 հատվածի 4891 հոդվածից 4729 հոդվածին հատկացնել 800.000 ՀՀ դրամ՝ սոցիալապես անապահով բնակիչներին և ուսանողներին օգնություն ցուցաբերելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԵՍԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀՈՎԻԿ			
ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ			
ՂՈՒԼԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ			
ՄԱՏԻՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ			
ԱԶԱՏՅԱՆ ԱՐԱ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՐԱՏ			
ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2019 թ. Թիվ 39 –Ա

««ԻՋԵՎԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ հոդվածի առաջին մասի 5 – րդ կետով, համայնքի ավագանին

Որոշում է

1.Որպես համայնքի կողմից ներդրում ««Իջևան» Երիտասարդական դաշինք»հասարակական կազմակերպությանը պահուստային ֆոնդի վարչական մասի 4891 հոդվածից 4819 հոդվածին հատկացնել 600 000 ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԵՍԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ			
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀՈՎԻԿ			
ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ			
ՂՈՒԼԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ			
ՄԱՏԻՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ			
ԱԶԱՏՅԱՆ ԱՐԱ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՐԱՏ			
ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգորյան